չայ, որում եւ գրեալ էր Պօղոս Պատրիարք վասն այնր խնդրոյ, և էառ 'ի նմանէ եւս գիր առ մեծամեծս Երուսաղէմի հաստատուն պահել զվճիռն, որ տուաւ վասն դըրան Բեթղեհէմի հրամանաւ Կուսակալին Դամասկոսի։

Հակառակութիւնք Ցունաց անվերջանալի էին 'ի Բեթղեհէմ, զի կամէին խափանել զպատարագն Հայոց յԱյրէն Ծննդեան Քրիստոսի և արտաքսել յեկեղեցւոյ անտի, բառնալով զկանթեղս, զպատկերս և զայլ եկեղեցական սպասս. և 'ի բողոքելն Հայոց առ Դատաւորն, և 'ի ցուցանել նոցա զամենայն գրեանս վասն այնր, կոչեալ զնոսա պատուիրեաց չհակառակիլ ընդդէմ Կայսերական հրամանին և բազմաթիւ գրեանց, եւ չյարուցանել վէճս ընդ Հայոց, և 'ի հաստատութիւն բանից նորին ինքն եւս գրեաց գիր, և Հայք առաքեցին զայն աղերսագրով առ Կուսակալն Սալէհ Փաշայ, և նա գրեաց առ Դատաւորս Երուսաղէմի բառնալ զհակառակութիւնս Ցունաց և լինիլ պաշտպան իրաւանցն Հայոց, որք սահմանեալ են արքունի հրովարտակաւ, լինիլ բաժանորդ եկեղեցւոյն Բեթղեհէմի եւ գերեզմանին Ս. Աստուածածնի։ Ի վերայ այսորիկ լռեալ Ցունաց ժամանակս ինչ, դարձեալ յարուցին խռովութիւն մեծ, զի բովանդակ եկեղեցին Բեթղեհէմի սեփհական Ցունաց ասէին, եւ 'ի սաստել Դատաւորաց՝ դարձեալ լռեցին, եւ զկնի միոյ տարւոյ վերստին խռովութիւն մեծ, զի կամէին փականս դնել 'ի վերայ փայտեայ դրան եկեղեցւոյն, որ 'ի սիւնազարդ դաւթին, և զի չէին հաճեալ ընդ կարգադրութիւն Նուրի Էֆէնտեայ, որ լեալ էր Արքունի հրովարտակաւ և գիտութեամբ ամենեցուն, և այսպէս օր քան զօր զայրանայր խռովութիւնն, և այն յաւէտ 'ի փոփոխիլ Դատաւորաց քաղաքին։ Իսկ Հայք դարձեալ դիմեցին առ Դատաւորն, և մատուցեալ զգրեանս ամբաստան եղեն զանիրաւութենէ Ցունաց, եւ 'ի հարցանել նորա ցայլազգիս, եւտուն պատասխանի, թէ սիւնազարդ դաւիթ եկեղեցւոյն Բեթղեհէմի բաժանորդութեամբ է երից ազգաց, և Հիւսիսային կողմն յատկացեալ Հայոց, և Գերեզման Ս. Կուսին բաժանորդ 'ի մէջ Հայոց եւ Ցունաց։ Արգել Դատաւորն զՑոյնս չխափանել զճանապարհն և չվիճել վասն եկեղեցւոյն և այլոց իրաց։ Եւ 'ի փոխիլ Դատաւորին դարձեալ առե-